ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

« »_____ 20 թ.
N_____

ՄԵԴԻԱ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ
ԼՐԱԳՐՈՂ ԳՈՌԱՐ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Սարգսյան,

Ի պատասխան Ձեր հարցման՝ կից Ձեզ է տրամադրվում նախորդ գրությամբ վկայակոչված գործերի ցանկը, որոնց ընթացքի վերաբերյալ կարող եք ծանոթանալ Datalex տեղեկատվական համակարգից:

Միաժամանակ հարկ է նշել, որ կենսաթոշակ նշանակելը մերժելու հիմքով արցախահայերի կողմից դատարաններ դիմած անձանց թվաքանակի վերաբերյալ առանձին հաշվառում չի իրականացվում, իսկ աշխատանքային կարգով կատարված հաշվառման արդյունքում՝ տեղեկացվում է, որ վերջին 10 ամիսների ընթացքում Հայաստանի Հանրապետության դատարաններ են դիմել ***շուրջ*** 73 արցախահայեր:

Ինչ վերաբերում է դիմումով բարձրացված երկրորդ հարցին, ապա, հարկ է նշել, որ Ծառայության կողմից սահմանված ընթացակարգով ապահովվել է այն վճիռների կատարումը, որոնք օրինական ուժ են ստացել, մասնավորապես՝ նշանակվել է կենսաթոշակ, վերահաշվարկվել են արդեն նշանակված կենսաթոշակներ, տրամադրվել լրավճար գումարներ՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

«Պետական կենսաթոշակների մասին» օրենքով սահմանված կենսաթոշակները վճարվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից:

Առդիր՝ ցանկ:

X_____

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **Կ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Կատարող՝ դատական գործերի բաժին,
հեռ. 060 654-099/474/

Երևան 0010, **Նալբանդյան** 13, **հեռ.**՝ (374 60) 65 40 75
info@socservice.am , www.socservice.am